ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԸՆԴՈՒՆԵՑ ԹՈՒՐՔՄԵՆՍՏԱՆԻ ՆԱԽԱԳԱՀԻՆ

Նոյեմբերի 30-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Թուրքմենստանի նախագահ Գուրբանգուլի Բերդիմուհամեդովին՝ ուղեկցությամբ ՀՀ Արտաքին գործերի նախարար Էդվարդ Նալբանդյանի:

Ողջունելով նախագահի այցը Մայր Աթոռ Ս. Էջմիածին՝ Վեհափառ Հայրապետը բարձր գնահատեց երկու երկրների միջեւ առկա եղբայրական ջերմ հարաբերությունները: Նորին Սրբությունը վստահություն հայտնեց, որ Թուրքմենստանի նախագահի այցը Հայաստան նոր խթան պիտի հանդիսանա հարաբերությունների առավել սերտացման եւ զարգացման համար:

Ամենայն Հայոց Կաթողիկոսն իր գնահատանքը հայտնեց պրն. Գ. Բերդիմուհամեդովին՝ հայ համայնքի հանդեպ ցուցաբերվող հոգատար եւ ջերմ վերաբերմունքի համար, որի արդյունքում հայ ժողովրդի զավակները կարողանում են կազմակերպել նաեւ իրենց հոգեւոր ու մշակութային կյանքը: Այս առիթով Նորին Սրբությունը դիմեց Թուրքմենստանի նախագահին՝ հնարավորություն ընձեռել վերականգնելու խորհրդային տարիներին ավերված Թուրքմենբաշիի հայկական եկեղեցին, ինչը կնպաստի Հայ Եկեղեցու լիարժեք գործունեությանը Թուրքմենստանի հայ համայնքի կյանքում եւ նոր մակարդակի կբարձրացնի երկու երկրների միջկրոնական երկխոսությունը:

Թուրքմենստանի նախագահ Գուրբանգուլի Բերդիմուհամեդովը գոհունակություն հայտնեց Հայաստան երկօրյա այցի ընթացքում արձանագրված արդյունքների առիթով: Անդրադառնալով Թուրքմենստանի հոգեւոր կյանքին՝ նախագահը կարեւորեց կրոնի դերը հասարակության կյանքում եւ մասնավորապես երիտասարդության դաստիարակության գործում: Ի պատասխան Ամենայն Հայոց Հայրապետի դիմումի՝ նախագահը հանձնարարական տվեց հանդիպմանը ներկա Թուրքմենստանի կառավարության ներկայացուցիչներին՝ քննարկելու հարցը եւ դրական լուծում տալու Հայ Եկեղեցու խնդրին: Թուրքմենստանի նախագահը նաեւ հրավեր ուղղեց Ամենայն Հայոց Կաթողիկոսին այցելելու Թուրքմենստան:

Հանդիպման ավարտին Նորին Սրբությունը արդյունավոր նախագահություն մաղթեց պրն. Բերդիմուհամեդովին՝ ի փառս Թուրքմենստանի եւ նրա ժողովրդի:

Հանդիպմանը ներկա էին նաեւ Մայր Աթոռի Հրատարակչական բաժնի տնօրեն Տ. Նաթան արքեպիսկոպոս Հովհաննիսյանը եւ Մայր Աթոռի Միջեկեղեցական հարաբերությունների բաժնի տնօրեն Տ. Հովակիմ եպիսկոպոս Մանուկյանը:

ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

Թուրքմենստանի նախագահը Մայր Տաճարում